

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՄԵՐ ԵՐԿՐԻ ՔՆԱԾ ՈՅԺԵՐԸ

Անկարելի է երեակայել աւելի մեծ դժբախտութիւն մի երկրի համար, քան այն, եթե ժողովուրդն աղքատ է։ Մեր երկրը այդ դժբախտութեան մէջն է։

Ինքը երկրը մեծ հարստութիւններ ունի թաղուած իր կրծքում։ Նա ընդարձակ զարգացման համար մեծ ընդունակութիւններ ունի։ Բայց նրա մէջ ապրող ազգաբնակութիւնը ներկայում շատ քիչ է օգտուած այդ հարստութիւններից և յաճախ, շատ յաճախ, նա օրեկան հացի կարօտ է լինուած։

Ցաւալի՛ դրութիւն։ Ունենալ հարաւի բնութիւն, որ կարող է բուցնել թանկագին արդինքներ, ունենալ ալպեան հրաշագեղ արօսներ, որոնք կարող են նպաստել ստեղծելու մեր երկրում շվեյցարական տնտեսութիւն, ունենալ առատ և բազմատեսակ հանքեր, ունենալ արդիւնագործական ձեռնարկութիւնների համար նպաստաւոր պայմաններ և այդ բոլորը ունենալով հանդերձ, վարել թշուառ ու զրկանքներով լի կեանք— այդ, արգարեն, մեծ դժբախտութիւն է։

Իսկ եթե մի երկրի ժողովուրդն աղքատ է, այնտեղ շատ դժուար է երազել մտաւոր և հաօարակական ընդարձակ առաջադիմութիւն։ Աղքատ ժողովուրդն անկարող կը լինի լուրջ և մեծ ծախքեր անել կրթական և հանրային հաստատութիւններ հիմնելու և պահպանելու համար։ Նա ժամանակ չի ունենալ հոգեկան աւելի բարձր պահանջների մասին մտածելու և նիւթական միջացներ չի ունենալ նրան բաւարարութիւն տալու մասին հոգալու։ Այդպիսի մի ժողովրդի մէջ լուրջ և ընդարձակ կերպով չեն կարող զարգանալ ոչ զպրոցներ, ոչ թանգարաններ, ոչ թատրոն, ոչ մամուլ և ոչ առհասարակ գրականութիւն։

Դուք կարող էիք գուցէ ենթադրել, որ մեր երկրը իւիտ է բնակեցրած և որ նա արդէն այլոս անկարող է աւելի աղքաբնակութիւն անդաւորել իր մէջ։ Ոչ, բոլորովին ոչ։ Անդը կովկասը ունի ընդամենը հինգ ու կես միլիոն հոգի բնակիչ։ մի թիւ, որ կազմում է միայն երրորդ և չորրորդ մասը այն աղքա-

կազմով մեծ քանակութեամբ միատեսակ ապրանք, որպէսզի ստեղծէինք մշտական կանոնաւոր պահանջ դործարանների կողմբց: Մենք անհմուտ եղանք մեր բազմատեսակ մրգերի համար ապահով վաճառանոցներ բանալու Շուստատանի ներքին նաև հանգներում, որոնք մրգեր են սատանում ուրիշ արջաններից և յաճախ արտասահմանից: Այդպէս և շատ ուրիշ արդիւնքների վերաբերմամբ: Այն, ինչ որ այժմ արդիւնաբերում ենք, հետեւնալ դրութեան մէջ է: Խաղողի այդու տարածութիւնը Սնդըր-կոմիսառում հաւասար է.

Թիֆլիսի նահանգում 25,000 գեսեատինի.

|                 |   |        |
|-----------------|---|--------|
| Քութայիսի       | » | 35,000 |
| Երևանի          | » | 8,500  |
| Գանձակի         | » | 23,000 |
| Բագուի          | » | 12,000 |
| Դաղստանի        | » | 2,600  |
| Կարսի           | » | 56     |
| Զաքաթալի շրջանի |   | 1,200  |

Այդ այգիներից ստացուում է մինչև  $9\frac{1}{2}$  միլիոն վեցրո գինի և մոտ 5 միլիոն փութ խալու, որոնք մեծ մասամբ սպառուում են Անդրկոմիսի սահմաններում: Միայն պաղատառ այգիների տարածութիւնը համարում է 65,000 գեսեատինի:

Բամբակի ցանքսերի տարածութիւնը միայն Երևանեան նահանգում փոքր ի շատէ մեծ է: Միւս տեղերում նա սկսեց ընդարձակուել միայն վերջին տարիներում: Բամբակի ցանքսերը բանում են:

| Տարածութիւն | Պուտ բամբակ    | Արժողութիւն               |
|-------------|----------------|---------------------------|
| Երևանեան ն. | 25,000 գեսեատ. | 460,000 փութ 3,000,000 ռ. |
| Գանձակի     | 10,000 »       | 170,000 » 1,275,000       |
| Բագուի      | 3,000 »        | 50,000 » 375,000          |
| Քութայիսի   | 3,000 »        | 30,000 » 225,000          |
| Թիֆլիսի     | 400 »          | 4,000 » 3,000             |

Ընդամենը 41,400 714,000 4,878,000

Մեր երկրը կարող է բուսացնել այդ արդիւնքները աւելի մեծ քանակութեամբ ու աւելի լաւ յատկութեան և այդպիսով տալ մեր երկրի ազգաքնակութեան աւելի մեծ եկամուտ, քան որ տալիս է: Նոյնը կարելի է ասել և ծխախոտի, չերամի, մեղրի և ուրիշ մթերքների մասին:

Անդրկոմիսի լեռնային բարձրագիր մասերում, որոնք գտնուում են 6,000—10,000 ոտնաշաբ ծովի մակերեւոյթից բարձր, մեծ աջողութեամբ կարող է զարգանալ անասնապահութիւնը:

Այդտեղ ներկայումս սկսել է զարգանալ շվեյցարական պանրի պատրաստութիւնը, որ, սակայն, դրաւել է մի շատ անհամ մասը այն տարածութեան, որտեղ ապագայում կարող է ծաղկել կաթնատնտեսութիւնը նոյնպէս, ինչպէս այդ տեղի ունի, օրինակ, Շվեյցարիայում և Տիրոլում: Մեր ալպեան արօտները տալիս են նոյնպիսի անդարար և առողջ բուսականութիւն, ինչպէս շվեյցարական ալպերը: Կաթը մաքուր է և ունի անուշ համ, նրանց պատրաստած պանիրը նոյնպէս համեղ է, ինչպէս բուն շվեյցարականը: Կովկասեան պանիրները լաւ ընդունելութիւն են գտնում Մուկուայի և Պետերբուրգի վաճառսնոցներում: Սակայն Անդրկովկասը ներկայումս պատրաստում է շատ քիչ շվեյցարական պանիր, ընդամենը 20,000 փութ: Մինչդեռ մեր երկրի ալպերը շատ ընդարձակ են և պանրի այդ քանակութիւնը կարելի էր աւելացնել ժամանակով նոյնիսկ տասն անգամ: Արդարեւ Անդրկովկասում կայ մինչեւ 6 միլիոն դեսետին հող, որտեղ անասնապահութիւնը կարող է զարգանալ: Եթէ այդ վեց միլիոնից միայն հաշուենք մէկ միլիոն այնպիսի հող, որտեղ կարելի է պատրաստել շվեյցարական պանիր, մենք կը տեսնենք, որ իսկապէս կարող ենք կաթնատնտեսութեան այդ ճիւղը զարգացնել ընդարձակ կերպով և արդիւնաբերել մի քանի հարիւր հազար փութ շվեյցարական պանիր: Այդպէս և միւս ճիւղերում:

Անցնենք մեր հանքային հարստութեան: Մեր երկիրը միայն վերջին ժամանակներն սկսեց ցոյց տալ հանքային հարըստութեան իր ոյժը: Այդ հարստութեան ամենանշանաւոր առարկան՝ նաւթը, օրինակ, մի երեսուն տարի առաջ, արդիւնաբերում էր շատ աննշան քանակութեամբ, և այդ նաւթը սպառւում էր երկրի մէջ, ծառայելով իրեւ կոպիտ վառելիք և իրեւ կուպրանաւթ: Իսկ երբ սկսուեց նրա կանոնաւոր շահագործութիւնը, զինուած տեխնիկայի կատարելագործութիւններով, նաև թային արդիւնաբերութիւնը ստացաւ մի այնպիսի մեծ և ընդարձակ զարգացում, որի մասին երազել անզամ անկարելի էր: Ապշերոնսեան թերակղզու շրջանը այժմ արդիւնաբերում է կէս միլիարդ փութից աւելի, մօտ 600,000 փութ նաւթ և օրէցօր ընդարձակում է իր արտաթորումը: Նաւթը մի գեղեցիկ օրինակ է, թէ ինչպէս կարող է մի երկրի մէջ ստեղծուել ընդարձակ արդիւնաբերութիւն, երբ միջոցներ են գտնուած շահագործելու հողի մէջ թաքնուած մեծ հարստութիւնը:

Լեռնային գեղարտամինատի հրատարակած կովկասի հանքերի մասին մի յատուկ աշխատութիւն ցոյց է տալիս, որ մինչեւ այժմ յայտնադործուած են 2,058 կէտ, ուր կան զանազան

տեսակ հանքեր, որոնց համեմատական թիւը կարելի է դասաւորել հետևեալ կերպով. գտնուած հանքեր.

|                      |   |   |   |     |          |
|----------------------|---|---|---|-----|----------|
| Պղնձի                | . | . | . | 212 | կէտերում |
| Նաւթի                | . | . | . | 210 | »        |
| Աղի                  | . | . | . | 164 | »        |
| Արծաթ-արծիճի         | . | . | . | 145 | »        |
| Գարածուխի            | . | . | . | 134 | »        |
| Երկալթի              | . | . | . | 100 | »        |
| Մարգանցի             | . | . | . | 53  | «        |
| Ծծմբային կօչեդանի    | . | . | . | 45  | »        |
| Ծծմբի                | . | . | . | 40  | »        |
| Տօրփի                | . | . | . | 25  | »        |
| Գլատուբերեան աղի     | . | . | . | 21  | «        |
| Գրաֆիտի              | . | . | . | 18  | »        |
| Արսենիկի (զառիկ)     | . | . | . | 15  | »        |
| Ոսկու                | . | . | . | 13  | »        |
| Ցինկի                | . | . | . | 13  | »        |
| Օզոկերիտ (լեռնամում) | . | . | . | 6   | »        |
| Կօբալտի              | . | . | . | 5   | »        |
| Մնդիկի               | . | . | . | 3   | »        |
| Մօլիբդէնի            | . | . | . | 3   | »        |
| Վիսմուտի             | . | . | . | 1   | »        |
| Նիկելի               | . | . | . | 1   | »        |

Սա ցուցակի միայն մի մասն է: Աւելացրեք զրան զանազան տեսակ քարերի և հողերի հանքերը, որոնք կարող են մեծ նշանակութիւն ունենալ իբրև շինութեան համար նիւթեր: Այդ հանքային հարստութիւնների շարքում ներկայումս, անկառած, ամենամեծ նշանակութիւն ունի իր քանակութեամբ նաևթը, ուրը դարձել է համաշխարհային առևտրի առարկայ և զգալի կերպով ազդում է վաճառանոցի գների վրայ: Միւս հանքերից շահագործում են նշանաւոր քանակութեամբ՝ մարգանէց, քարածուխ, աղ և պղինձ: Խակ շատերի շահագործութիւնը դեռ նոր է սկսուած: Բայց նրանց շահագործութեան ինդիրը արդէն դարձել է հերթական:

Անդրկովկասի զանազան անկիւններում գուք հանդիպում էք ներկայութեամբ մարգկանց, որոնք սար ու ձոր են ընկել հանքեր որոնելու: Եւ հետևանքը յաճախ գոհացուցիչ է: Ամեն օր նոր և նոր հանքատեղեր են գտնուում: Մեր հանքային հարստութիւնը, որքան պարզուել է մինչև այժմ արած ուստամասիրութիւններից, աչքի է ընկնում իր բազմատեսակութեամբ: Մնում է գտնել այսպիսի հանքատեղեր, որոնք նշանաւոր լինէին հանքի

որակութեամբ, երակների առատութեամբ, Բովագործութիւն  
և շահագործութիւն սկսելու համար անհրաժեշտ է, որ հանքի  
քանակութիւնը մեծ լինի և գործի ձեռնարկողները կարողանան  
պաշար ունենալ մի քանի տասնեակ տարիների համար:

Վերջին տարիները մեր հանքային հարստութեան վրա  
սկսեցին լուրջ ու շաղբութիւն դարձնել արտասահմանեան ըն-  
կերակցութիւնները և լուրջ տեղեկութիւններ են ժողովում այդ  
հանքերի յատկութեան և նրանց շահագործելու պայմանների  
մասին: Սրտասահմանեան ընկերակցութիւնները կարող են մեծ  
գին տալ մեր հանքերից մի քանիսին, նպատակ ունենալով իրանց  
ձեռքը ձգել արդինագործութեան ամբողջ ճիւղեր և հաստատե-  
մենավաճառութիւն համաշխարհային չուկայում: Օրինակ, պը-  
զնձի ընկերութիւնների մի նշանաւոր մասը ներկայումս կազ-  
մում է մի խոչոր միութիւն, որ յատնի է պղնձի սինդիկատ  
անունով և ձգտում է իր ձեռքը զցել երկրագնդի բոլոր մասերի  
պղնձի արդինագործութիւնը և առևտուրը: Մի այդպիսի սին-  
դիկատի համար, որ հարիւրաւոր միլիոնների դրամագույնի է  
կենդրունացրել իր ձեռքում, բաւական հեշտ է զնել աշխարհի  
այս եւ այն ծալրում գանուող այն հանքերը, որոնք կարող են  
նշանաւոր լինել իրանց արդինագններով: Եթէ մեր մէջ բաւակա-  
նաչափ զօրաւոր լինէր կազմակերպող ողին և պատրաստ լինէին  
տեխնիքական ոյժեր, մենք կարող ենք լինքներս լուրջ ձևնար-  
կութիւններ սկսել և զարգացնել տեղական արդինագործու-  
թիւնը, ազատելով նրան մենավաճառութեան հաճոցներից և  
բօրսայի խաղերից:

Մենք մանրամասն կանգ չենք առնում մեր երկրի մի քանի  
ուրիշ խոչոր հարստութիւնների վրայ, ինչպէս են, օրինակ, ան-  
տառային, ձեխորսական նշանաւոր հարստութիւնները: Մեր ան-  
տառներն ընդունակ են մատակարարելու թանկացին տեսակի  
փայտեղին՝ նուրբ շինուածքների համար, մինչդեռ այժմ մենք  
յաճախ լինքներս ենք փայտեղին՝ նիւթի մի մասը ներմու-  
ծում մեր երկիրը արտասահմանից: Մեր ձեխորսական արհեստար  
դանուում է գեռ նահապետական վիճակի մէջ և ոչ մի խելացի  
միջոց գեռ չէ գործադրուած ձեխային հարստութիւնը մեծա-  
ցնելու նպատակով:

Այժմ մի քանի խօսք մեր երկրի անայնագործութեան և  
գործարանական կեանքի մասին: Տնայնագործութիւնը մեր երկ-  
րի ազգաբնակութեան հին, մանր տրհեսոն է, որով նա ժա-  
ռանգաբար սատել է անցեալից: Այդ արհեստների թիւը կա-  
րելի է հաշուել մօտ յիսուն: Նրանց մէջ կան այնպիսիները, ո-  
րոնք զարգանալ չեն կարող և մատնուած են անհետացման:

Բայց կան և այնպիսիները, որոնք կարող են զարգանալ և երկար ժամանակ դիմանալ մրցումից: Վերջապէս կան մանր արհեստներ, մեր երկրին անծանօթ, որոնց կարելի է մացնել մեր երկրի մէջ և այդպիսով տալ ազգաբնակութեան ձեռքը աշխատանքի նոր միջոցներ:

Ինչ վերաբերում է գործարանական կեանքին, նա նոր է սկսում միայն զարգանալ: Գործարանական բանուորների թիւը մեր երկրում գեռ չէ համառ նոյնիսկ 25,000 անձի և հազիւ կազմում է ընդհանուր ազգաբնակութեան  $\frac{1}{2}\%$ -ը: Եղած գործարաններում միջին թուով աշխատում են 18—20 բանուոր և արդիւնաբերում են մօտ 50,000 ոռւբլու արդիւնք:

Բայց մեր երկրը նպաստաւոր պայմաններ ունի արդիւնագործութեան լայն զարգացման համար: Մենք ունենք առատ վառելիք և կարող ենք արդիւնաբերել առատ հում նիւթեր: Նաւթը կարողութիւն է տալիս մեր երկրին ունենալ էժան և մեծ քանակութեամբ վառելիք, որ արդիւնագործական կեանքի ամենախոշոր և էական պահանջներից մէկն է: Ժամանակով կ'աւելանայ և ելեկտրական ոյժի գործակցութիւնը, որ մեր երկրում կարող է մեծ զարգացում ունենալ: Ելեկտրական ոյժ զարգացնելու համար շատ նպաստաւոր են մեր լեռնային գետակները: Դրանց հոսանքից կարելի է օգտուել թէ գործարաններ կառուցանելու մեր երկրի լեռնային մասերում և թէ ելեկտրական ոյժ առաջ բերելու կենսական շատ պահանջների համար:

Ուրեմն կայ վառելիք, կայ ոյժ, արտադրելու կարողութիւն, կան նաև բազմաթիւ գիւղանտեսական, հանքային և ուրիշ հում նիւթեր մշակութեան համար: Մնում է օգտուել այդ եղածից և միջոցներ որոնել երկրի քնած ոյժերն արթնացնելու և շարժման մէջ դնելու:

Եթէ պատերազմի համար հարկաւոր է կանոնաւոր և սիստեմով կատարուած դինայարժ, նոյնը աւելի մեծ չափով և տեսլի բազագրեալ կերպով պէտք է կատարել՝ պատերազմնելու ժողովրդական աղքատութեան դէմ և նրա ձեռքը տալու իր հարուստ հայրենիքի ժառանգութիւնը: Այն ժամանակ կը վերանայ այն անհեթեթ և ամսուր փաստը, որին մենք ներկայ ենք, այն է, որ մեծ և ճոխ հարստութիւնների երկրում, ուկիներով շրջապատուած, ապրում է մի աղքատ և տղէտ ժողովուրդ:

Ա. ՔԱՂԱՆԹԱՐ